

Բ.

66. Կող Պախտին քշեց ուր ձին գնաց Մորայ Մէլիքի չատրի առջև կայնաւ: Մէլիք որ տէսաւ, առաց ուր մշակներաց. «Աստ-ծու սիրուն էտայ տարէք զատ, ես խորը նմուշ չտեսնամ»: Ետոյ բերաւ թաշտ մը, տրեց ուր առջև. առճիւ մը զարկեց ուր ճակատ, արուն թափաւ, թաշտ լցուց. բերեց մէկ կէօլէօն¹ թոռլթ, էն արունով դրեց, օրօխեց մէկն արեւելեան թաղաւո-րուն, մէկն արեւմտեան. մէկն հիւսիսին, մէկն հարաւին, որ եօթ փաշայ իրենց խեծելով դեան հիմտաւ²: Մորայ մէլիք աէսաւ, որ չորս կողմէն ուր հիմտաւներ կխասեն, ձէնով էս խաղն ստաց:

67. «Էկան որ էկան լտարիկ³ ճհէլներ, էկան կէօ խարիւր խա-ղար խամար:

Էկան որ էկան թառ պեղ ճհէլներ, կէօ էկան խարիւր խա-ղար խամար:

Էկան որ էկան մուրուս կնտուկներ, էկան կէօ խարիւր խա-ղար խամար:

Էկան որ էկան ծաղ⁴ մուրուսաւորներ, էկան կէօ խարիւր խաղար խամար:

Էկան որ էկան կրկղուկներ⁵, էկան կէօ խարիւր խաղար խամար:

Էկան որ էկան զուանայ փչողներ, էկան կէօ խարիւր խա-ղար խամար:

Էկան որ էկան նաղարայ զարկողներ, էկան կէօ խարիւր խաղար խամար:

Էկան որ էկան փող փչողներ էկան, կէօ խարիւր խաղար խամար:

Էկան որ էկան տուտուկ փչողներ. էկան կէօ խարիւր խա-ղար խամար:

Էկան որ էկան շաւեռ⁶ քեաշողներ, էկան կէօ խարիւր խաղար խամար:

Էկան որ էկան տիւֆ զարկողներ, էկան կէօ խարիւր խա-ղար խամար:

Էկան որ էկան եօն փաշութեն, չորս կողմ աշխրէն:

1 Խոյեցերէն կոլոն—կոյտ: 2 Օղնոթիւն: 3 Լերկ, անմուրուս:
4 Նաղկեալ: 5 Ալիւր, զառամեալ: 6 Քեամանի, չուծակ: